«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
"ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE" FOUNDATION

09 նոյեմբերի 2024 թ. *քաղաք Երևան*

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար թարգմանչական ծառայության ձեռքբերման նպատակով 29.09.2024թ.-ին կազմակերպված՝ ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ին ծանուցվել է, վերոնշյալ ծածկագրով ընթացակարգի հրավերին համապատասխան ներկայացնել օրենքով սահմանված համապատասխան գործունեությամբ զբաղվելու թույտվությունը և սննդի անվտանգության մասին ՀՀ օրենքի համապատասխան՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, կատարված և ավարտված պայմանագրերը, կատարված ֆուրշետների նկարներ: Տեքստիլ Փիփ ՍՊԸ –ի կողմից ստացվել է գրություն, որ չեն կարողանում ներկայացնել հրավերով պահանջվող և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ,14-րդ, 16-րդ հոդվածների պահանջների պահպանում , N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի պահպանման հավաստող փաստաթղթերը, նման գործունեություն իրականացնելու թույլտվությունը, որոնք օրենքով պարտադիր են հանրային սննդի մատուցման ծառայության գործունեություն իրականացնելու համար:

Գրության մեջ նշվում է, որ այդ փաստաթղթերի համար կազմակերպությունը դիմել է և դեռ նոր պետք է ստանա, սակայն դա ընդունելի և բավարար չէ :

- Ուստի հանձնաժողովը հայտը համարում է անբավարար և մերժում, համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հովածի 1-ին կետի և կարգի 92-րդ կետի :

Համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հովածի 7-րդ կետի, ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24 ծածկագրով ընթացակարգի 2-րդ տեղ զբաղեցրած՝ Մայլանչ ՍՊԸ-ին և 3-րդ տեղ զբաղեցրած ԱԼԻՍ ՔԵՅԹՐԻՆԳ ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում վերոնշյալ փաստաթղթերը ներկայացնելու համար:

Վերոնշյալ երկու մասնակիցները ևս չեն ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, ուստի.

- Ուստի հանձնաժողովը անբավարար է համարում և մերժում 2-րդ և 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը՝ համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հովածի 1-ին կետի, 526-Ն որոշման 92-րդ կետի և ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24 ծածկագրով ընթացակարգը համարվում է չկայացած:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ին, Մայլանչ ՍՊԸ-ին և ԱԼԻՍ ՔԵՅԹՐԻՆԳ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Տեքստիլ Փիփ ՍՊԸ	03566097	Կոտայքի մ., գ Առինջ, Պ.Սևակի 6փ., 7/1			ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետ	ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24
Մայլանչ ՍՊԸ	01244078	Ք.Երևան, Վ.Սարգսյան 26/3			ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետ	ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24
ԱԼԻՍ ՔԵՅԹՐԻՆԳ ՍՊԸ	02680429	Ք.Երևան, Կողբացի 83			ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետ	ՀՑԹԻ-ԳՀԾՁԲ-14/24

«09» նոյեմբերի 2024 թ.

ՏՆՕՐԵՆ՝ ԷԴԻՏԱ ԳԶՈՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի, 8/8,
Հեռ. +374 10 390981, էլ. փոստ՝ info@genocide-museum.am, www.genocide-museum.am

8/8, Tsitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia,
Tel. +374 10 390981, E. mail: info@genocide-museum.am, www.genocide-museum.am